Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան
Գ. Վ. Պլեխանովի անվան Ռուսաստանի տնտեսագիտական համալսարան
Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Գյումրու մասնաճյուղ

«Նոր տնտեսական աշխարհակարգը թվայնացման և արհեստական բանականության դարաշրջանում»
Միջազգային ամենամյա 3-րդ գիտաժողով

2023 թվականի հոկտեմբերի 18-20-ը ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղում տեղի կունենա **«Նոր տնտեսական աշխարհակարգը թվայնացման և արհեստական բանականության դարաշրջանում»** խորագրով միջազգային երրորդ ամենամյա գիտաժողովը, որին կարող են մասնակցել ինչպես հայաստանյան, այնպես էլ օտարերկրյա տարբեր համալսարանների ներկայացուցիչներ, պրոֆեսորադասախոսական անձնակազմի անդամներ, գիտահետազոտական կազմակերպությունների աշխատակիցները, հետազոտողներ, ինչպես նաև ուսանողներ, որոնց մասնակցության դեպքում գիտական ղեկավարի առկայությունը պարտադիր է:

Միջազգային գիտաժողովը հնարավորություն կհանդիսանա տնտեսագիտության և հարակից ոլորտների հետազոտողների և երիտասարդ գիտնականների համար գիտելիքների և փորձի փոխանակման տեսանկյունից:

Գիտաժողովի հիմնական ուղղություններն են՝

- *Տնտեսության թվային փոխակերպումներն ու արհեստական բանականություն*
- *Թվային տեխնոլոգիաների և արհեստական բանականության դերը տնտեսական քաղաքականության և որոշումների կայացման գործում*
- *Արհեստական բանականությունը և աշխատաշուկայի դինամիկան*
- *Թվայնացման ազդեցությունը համաշխարհային տնտեսության զարգացման օրինաչափությունների վրա*
- *Ֆինանսական շուկայի զարգացման նոր ուղղությունները*
- *Միջազգային տնտեսական հարաբերությունների զարգացման հեռանկարները XXI դարում*
- *Զբոսաշրջության ոլորտի զարգացումը 21-րդ դարի համաշխարհային մարտահրավերների համատեքստում*
- *Նոր տնտեսական կարգի սոցիալական, իրավական և քաղաքական ասպեկտները*

Գիտաժողովի աշխատանքային լեզուներն են՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն:

Գիտաժողովին մասնակցելու համար անհրաժեշտ է մինչև **ս/թ հոկտեմբերի 11-ը** ներառյալ լրացնել մասնակցության հայտը և կցել հոդվածը՝ ըստ ներկայացվող պահանջների՝

1. Հոդվածները պետք է ներկայացնել հայերեն, անգլերեն կամ ռուսերեն լեզուներից որևէ մեկով, «GHEA Grapalat» տառատեսակը հայերեն տեքստերի, «Times New Roman» տառատեսակը՝ անգլերեն և ռուսերեն տեքստերի համար, 12 տառաչափով, 1.5 տողամեջով, թուղթը՝A4 ֆորմատ, գրքային, լուսանցքները՝ վերևից, աջից, ձախից և ներքևից՝ 2 սմ:

2. Հոդվածի ծավալը՝ 8-12 էջ: Հոդվածի էջերը համարակալել ներքևից՝ աջ կողմում:

3.Հոդվածում հղումները կատարել տողատակում, ըստ հետևյալ հաջորդականության՝ աղբյուրի հեղինակ, վերնագիր, հրատարակության վայր, տարեթիվ(պարբերականի դեպքում՝ նաև համար) և էջ:

4.Հոդվածում ներկայացված աղյուսակները և գծապատկերները պետք է ունենան համարակալում, վերնագիր, համապատասխան հղումներ, խմբագրական միջամտության հնարավորություն:

5.Հոդվածի վերնագիրը գրել **ԳԼԽԱՏԱՌԵՐՈՎ**, թավատառ, հավասարեցնել կենտրոնում:

6.Հոդվածի վերնագրի տակ թավատառ գրել հեղինակ(ներ)ի անունը, ազգանունը, գիտական աստիճան/կոչումը(եթե առկա է), իսկ հաջորդ տողին՝ աշխատավայրը և երկիրը: Դրանք հավասարեցնել կենտրոնում:

7.Բաց թողնված 1 տողից հետո ներկայացնել աշխատանքի հակիրճ բնութագիրը (ամփոփումը) բնագրի լեզվով, մինչև 150 բառ, 11 տառաչափով, հավասարեցումը՝ երկկողմանի, ուղիղ:

8.Հաջորդ տողում գրել «**Հիմնաբառերը**»՝ կցելով 5-10 բառ կամ արտահայտություն՝ 11 տառաչափով, հավասարեցումը՝ երկկողմանի, ուղիղ:

9.Հաջորդ տողին գրել **անգլերեն** վերնագիրը՝ **ԳԼԽԱՏԱՌԵՐՈՎ** թավատառ, հավասարեցնել կենտրոնում: Հաջորդիվ գրել հեղինակ(ներ)ի անունը, ազգանունը (թավատառ), աշխատավայրը, երկիրը: Դրանք ևս հավասարեցնել կենտրոնում:

10.Նոր տողից գրել հոդվածի համառոտ բովանդակությունը արտացոլող Abstract՝ 200 բառի սահմաններում, որից հետո նոր տողում գրել նույն բանալի բառերն անգլերենով, 11 տառաչափով:

11. Հաջորդ տողին գրել ռուսերեն վերնագիրը՝ ԳԼԽԱՏԱՌԵՐՈՎ, թավատառ, հավասարեցնել կենտրոնում: Հաջորդ տողին գրել հեղինակ(ներ)ի անունը, ազգանունը, աշխատավայրը, երկիրը: Դրանք ևս հավասարեցնել կենտրոնում:

12. Նոր տողից գրել հոդվածի համառոտ բովանդակությունը արտացոլող Аннотация՝

150 բառի սահմաններում, որից հետո նոր տողում գրել նույն բանալի բառերը ռուսերենով, 11 տառաչափով, հավասարեցումը՝ երկկողմանի, ուղիղ:

13. Ամփոփումը գրել հստակ՝ զերծ երկրորդական նշանակության տեղեկություններից: Այն պետք է արտացոլի աշխատանքի հիմնական բովանդակությունը և արդյունքները:

14. Բաց թողնված 1 տողից հետո ներկայացնել **Նախաբանը** (եզրույթը՝ փոքրատառերով, թավ)՝ հոդվածի թեմայի շրջանակում գրականության վերլուծություն, աշխատանքի նպատակի շարադրում, արդիականության և նորույթի հիմնավորում, հավասարեցումը՝ երկկողմանի, ուղիղ:

15. Հաջորդ տողից՝ հոդվածի հիմնական տեքստը՝ **Վերլուծությունը**, որն արտահայտում է նրա հիմնական բովանդակությունը, որը կարելի է բաժանել գլուխների կամ ենթագլուխների, հավասարեցումը՝ երկկողմանի, ուղիղ:

16. Հիմնական տեքստից հետո մինչև 150 բառի սահմաններում ներկայացնել **Եզրահանգումը** (եզրույթը՝ փոքրատառերով և թավ)՝ աշխատանքում ստացված հիմնական արդյունքների ներառմամբ, հավասարեցումը՝ երկկողմանի, ուղիղ:

17. Եզրահանգումից հետո ներկայացնել գրականության ցանկը բնագրի լեզվով, այբբենական կարգով՝ **Vancouver Citing & Referencing style**-ի համաձայն՝ սկզբում հայատառ, ապա լատինատառ և սլավոնատառ գրականությունը: Տառաչափը՝ 11, միջտողային հեռավորությունը՝ 1.15:

Հարցերի դեպքում կարող եք գրել spf.asuegb@gmail.com էլ.հասցեին (ՀՊՏՀ ԳՄ Հետազոտությունների և զարգացման բաժին) կամ զանգահարել (+374)94199938 հեռախոսահամարով: